Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԿՑ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 5

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 6. Կոտայքի մարզ– ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 07.01.2025 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- լվացքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- ***Սոցիալ-հոգեբանական օգնության*** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 44 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 7 դեպքի վարում՝ վերափաստագրման կազմակերպում 2 հոգու համար, անվճար երթևեկության քարտի ձեռք բերում 1 անձի համար, նոր անձնագրի ձեռք բերում 4 հոգու համար, 79 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ: Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
- Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 5 խմբակ՝ առողջ ապրելակերպ/ առողջական ֆիզկուլտուրա, զարգացնող խաղեր. տիկնիկագործություն, հոգևոր, որին մասնակցել է 44 շահառու: Կազմակերպվել է թվով 41 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 44 շահառու:
- **Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում** իրականացվել է արվեստի. խաղային, հոգեբանական. ինտելեկտուալ **41** թերապեվտիկ պարապմունքներ, որոնց մասնակցել է 23 շահառու:
- **Սննդի տրամադրման շրջանակներում** յուրաքանչյուր օր կենտրոնում սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- **Լվացքի տրամադրման ծառայությունից** օգտվել է 2 շահառու :
- **Վարսահարդարման ծառայությունից** օգտվել է 9 շահառու :
- **Ակնաբուժական ծառայությունից** օգտվել է 19 շահառու:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրված նյութերի հղումները առկա են եռամսյակային հաշվետվություններում: Ամանորյա միջոցառման նյութը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ywkydz,
http://surl.li/ncdcjs) :

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու. աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով ցերեկային կենտրոնի պատասխանատուի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և դեպքերի ուսումնասիրություններ, կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպվել է դասընթաց անձի ֆունկցիոնալության գնահատման. «Դեպքի վարում».  «Տրավմա» թեմաներով: Հրազդանի սոցիալական աշխատողը մասնակցել է «Հայկական Կարիտաս»-ի կողմից կազմակերպված «Տարեցների հետ տարվող սոցիալական խնամքը» թեմայով առցանց դասընթացին:
Կենտրոնի պատասխանատուն մասնակցել է ՄՍԾ Հրազդանի ՏԿ-ին գործող համակարգող խորհրդի 6 նիստի, իրականացրել է տնային այց ՄՍԾ աշխատակցի եւ համայնքային սոցիալական աշխատողի հետ, մասնակցություն է ցուցաբերել Խոգաբարձուների խորհրդի 3 նիստի: Ինչպես նաեւ մասնակցել է «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի ամփոփիչ հանդիպմանը:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 43/44 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 29 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 2 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 2 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 2 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 42 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 44 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 44 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 23 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 44 |
| 5.1 | Առողջ ապրելակերպ և առողջական ֆիզկուլտուրա | 29 |
| 5.2 | Զարգացնող խաղեր | 16 |
| 5.3 | Տիկնիկագործություն | 12 |
| 5.4 | Հոգևոր խմբակ | 18 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 41 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 32 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) լվացքի ծառայություն<br>Վարսահարդարում<br>անկնաբուժական | 1<br>9<br>19 |

Կազմակերպության ղեկավար ___Երվանդ Մխիթարյան___ «07» 01.2025թ

[illegible]